

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Բ Ք

ԼՈՏՏՈՆԻ ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԵՐԿԱԹՈՒՂԻՆՆԵՐ

Մինչդեռ շատ երկիրներ մէկ քաղաքէն միւսը՝ երկաթուղի չէ որ՝ հասարակ ճանապարհներ անգամ կպակսին, Անգղիացիք իրենց մայրաքաղաքին մէջի արագընթաց բիւրաւոր կառքերովը, եւ ամէն կողմի երկաթուղիներովը շոգենաւերովը գոհ չլինելով, Լոնտոն քաղաքին տակը երկաթուղի մը շիներ են, որոյ բացման հանդէսը կատարուեր է Յունուարի 4-ին (16-ին) եւ հանդէսին ներկայ գտնուեր են Լորտ Փալմերսթոն եւ ուրիշ քանի մը իշխանաւորք: Այս գետնափոր ճանապարհը թէպէտ եւ թամիզին տակի թընելին մեծագործութիւնը չունի, բայց դարձեալ շատ աշխատանքով եւ մեծամեծ դժուարութեանց յաղթելով շինուած է: Բոլոր երկայնութեանը վրայ 15 կայարան ունի. քառորդը մէյմը ճանապարհ կենէ, առաւօտեան 8 ժամէն մինչեւ կէս գիշեր: Ամբողջ երկաթուղին ամէն տեղ գետնին տակը չէ, այլ երբեմն բաց տեղերէ կանցնի. բայց թէ՛ գետնափոր ճանապարհները եւ թէ՛ կառքերը միշտ լուսաւորուած են: Շոգեկառքերը այնպէս շինուած են որ իրենց ծուխը իրենք կուլ կուտան:

Լոնտոնի ստորերկրեայ երկաթուղւոյն երկայնութիւնը երեք մղոն ու կէս է, որ 18 վայրկենի մէջ կանցնուի՝ զանազան կայարաններն ալ կենալով: Հասարակ կառքերը այնչափ տեղը մէկ ժամուան մէջ հազիւ կկտրեն:

Առաջին օրը մինչեւ 40,000 հոգի այն ճանապարհով քալեր է, եւ կըսեն թէ այն ստորերկրեայ ճանապարհորդութիւնը իրեն ամէն տեսակ հանգստութիւնն ու դիւրութիւններն ունի:

ՉՈՒՅՏԵՐԻ ԱՅՍ ՉՄԵՌՈՒՄՆ ԶԻՆԱՔԵՐՔԸ .

Այս ձմեռ ուրիշ տարիներէն շատ աւելի ձիւն եկեր է Ձուիցերիի մէջ, եւ քանի մը գեղեր գրեթէ բոլորովին ծածկուեր են ձիւնով: Ասոր նման սաստիկ ձիւնաբերք պատահած չէ եղեր 1675-էն ի վեր: Եղած փորձանքներուն մէջ ամենէն սոսկալին այս է որ Լոքաւոնոյ գեղին եկեղեցւոյն ծած-

քը՝ վրայի ձիւնին ծանրութենէն յանկարծակի փլեր է. եւ որովհետեւ օրը կիրակի էր, Յունուարի 11-ը, եւ ժողովուրդը երեկոյեան ժամի եկած էր, 50 հոգւոյ չափ իսկոյն մեռեր են, շատը կնիկմարդիկ, 30 հոգի ալ վիրաւորուեր են:

ՆՈՐՈՐԻՆԱԿ ՏԱՊԱՆԱԳԻՐ ՄԸ .

Մտերս գաղղիացի ժամագործին մէկը իրեն համար այսպիսի տապանագիր մը շարադրեր է. «Այս է տապան հորիզոնական հանգստեան այս «անուն ժամագործին: *Չսպանակ* կենաց նորա «պատիւն էր, *ուղղեակ*՝ խոհեմութիւնն: *Ընթաց* «կենաց նորա միշտ կանոնաւոր էր, քանզի ըստ «*եւայ* լինէր *յանալիս* աստուածալաշտութեան «եւ եղբայրսիրութեան: Այնպէս բարեկարգեալ «էր զժամանակ իւր, զի *ժաւֆ* նորա անցանէին «յընդարձակ ոլորտս զուարճութեանց եւ վայելց, «մինչեւ շորայ կենաց նորա հատաւ ի 57 ա- «մին: Ընդ իւր տարաւ նա գոյոս անստգիւտ ե- «րեւելոյ առաջի մեծի *ժամագործին* տիեզերաց»:

Յայտնի է որ այս տապանագիրը հետեւուածին է Ֆոանքլինի հռչակաւոր տապանագրին, որ արդէն հրատարակուած է ամսագրոյս Ա հատորին մէջ, երես 278:

ՄԿՆԴԵՂԻ ԴԷՄ ՉՈՐԱՌՈՐ ԴԵՂԹԱՓ .

Ներքին Գործոց Ոստիկանարանէն հրաման ելաւ այս տարի, Յունուարի 9-ին, որ ամէն դեղավաճառ պատրաստ ունենայ հետագայ դեղութիւն (*փանգեհիրը*)՝ մկնդեղով (*սըյանօրոյով*) թունաւորութեանցէրու համար: Այս դեղութիւնը կըսուի լատիներէն *antidotum arsenici Fuchsii*. Երբոր մէկը մկնդեղով թունաւորուած է, պէտք է այս դեղութիւնը վեց եօթը ութը՝ մինչեւ 12 ապուրի դգալ խմցնել մէկ քառորդի մէջ: Թէ որ դեղը բիջ մը տաքցուցած լինի, աւելի շուտով օգուտ կընէ. եւ մինչեւ որ հիւանդին սրտին ետ գալը գազրի՝ պէտք է դգալ դգալ խմցնել:

